ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԴԴ-ԳՀԾՁԲ-18/11-1

ք. Երևան «05» 12 2018թ.

Դատական դեպարտամենտն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Հայկ Հայրապետյան Ռազմիկի Ա/Ձ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ձայնագրառման հատուկ համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 135 000 (մեկ միլիոն հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***Հայկ Հայրապետյան Ռազմիկի Ա/Ձ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Աբովյան, Հանրապետության 12/25
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 2051132124141001
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 43083511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ ***Կ. Փոլադյան***	***Ա/Ձ Հ. Հայրապետյան***
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

«05» 12 2018թ. կնքված
«ԴԴ-ԳՀՇՁԲ-18/11-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
3	72261160/11	«SRS Femida» ձայնագրառման հատուկ համակարգի հանգույցների, տեխնիկական ու ծրագրային շահագործման, համակարգերի տեղադրման ապահովման սպասարկող կազմակերպության խնդիրներ են՝ 1.Դատական նիստերի քարտուղարներին Համակարգի աշխատանքի վերաբերյալ խորհրդատվություն՝ ըստ անհրաժեշտության, 2.Համակարգի տեղադրում և կարգաբերում՝ ըստ անհրաժեշտության, 3.Համակարգի սպասարկում՝ ըստ անհրաժեշտության, 4.Համակարգի համար նախատեսված համակարգիչներում Օպերացիոն համակարգի տեղադրում և սպասարկում՝ ըստ անհրաժեշտության, 5.Համակարգով ստեղծված, սակայն նիստերի ջնջված ձայնագրությունների վերականգնում՝ ըստ անհրաժեշտության, 6.Համակարգի համար նախատեսված համակարգիչների ու հարակից սարքավորումների կանխարգելիչ պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացում /ամսական կտրվածքով/, 7.Համակարգի դիագնոստիկա/ամսական կտրվածքով/, 8.Ձայնագրված նիստերի արխիվացում՝ ըստ անհրաժեշտության, 9.Արագ արձագանք դատական նիստերի դահլիճներում տեղադրված Համակարգերի հետ կապված առկա խնդիրների լուծմանը: Խնդիրների ի հայտ գալու դեպքում մասնագետների այցելություն Երևան քաղաքում՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ մարզերում՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:	դրամ	***233 000***	1	Ստորև նշված ցանկի համաձայն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ:
4	72261160/15	«SRS Femida» ձայնագրառման հատուկ համակարգի հանգույցների, տեխնիկական ու ծրագրային շահագործման, համակարգերի տեղադրման ապահովման սպասարկող կազմակերպության խնդիրներ են՝	դրամ		1	Ստորև նշված ցանկի համաձայն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը

		1.Դատական նիստերի քարտուղարներին Համակարգի աշխատանքի վերաբերյալ խորհրդատվություն՝ ըստ անհրաժեշտության, 2.Համակարգի տեղադրում և կարգաբերում՝ ըստ անհրաժեշտության, 3.Համակարգի սպասարկում՝ ըստ անհրաժեշտության, 4.Համակարգի համար նախատեսված համակարգիչներում Օպերացիոն համակարգի տեղադրում և սպասարկում՝ ըստ անհրաժեշտության, 5.Համակարգով ստեղծված, սակայն նիստերի ջնջված ձայնագրությունների վերականգնում՝ ըստ անհրաժեշտության, 6.Համակարգի համար նախատեսված համակարգիչների ու հարակից սարքավորումների կանխարգելիչ պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացում /ամսական կտրվածքով/, 7.Համակարգի դիագնոստիկա/ամսական կտրվածքով/, 8.Ձայնագրված նիստերի արխիվացում՝ ըստ անհրաժեշտության, 9.Արագ արձագանք դատական նիստերի դահլիճներում տեղադրված Համակարգերի հետ կապված առկա խնդիրների լուծմանը: Խնդիրների ի հայտ գալու դեպքում մասնագետների այցելություն Երևան քաղաքում՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ մարզերում՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:		***290 000***			
5	72261160/13	«SRS Femida» ձայնագրռման հատուկ համակարգի հանգույցների, տեխնիկական ու ծրագրային շահագործման, համակարգերի տեղադրման ապահովման սպասարկող կազմակերպության խնդիրներ են՝ 1.Դատական նիստերի քարտուղարներին Համակարգի աշխատանքի վերաբերյալ խորհրդատվություն՝ ըստ անհրաժեշտության, 2.Համակարգի տեղադրում և կարգաբերում՝ ըստ անհրաժեշտության, 3.Համակարգի սպասարկում՝ ըստ անհրաժեշտության, 4.Համակարգի համար նախատեսված համակարգիչներում Օպերացիոն համակարգի տեղադրում և սպասարկում՝ ըստ անհրաժեշտության, 5.Համակարգով ստեղծված, սակայն նիստերի ջնջված ձայնագրությունների վերականգնում՝ ըստ անհրաժեշտության, 6.Համակարգի համար նախատեսված համակարգիչների ու հարակից սարքավորումների կանխարգելիչ պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացում /ամսական կտրվածքով/, 7.Համակարգի դիագնոստիկա/ամսական կտրվածքով/,	դրամ	***379 000***	1	Ստորև նշված ցանկի համաձայն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ:

		8.Ձայնագրված նիստերի արխիվացում՝ ըստ անհրաժեշտության, 9.Արագ արձագանք դատական նիստերի դահլիճներում տեղադրված Համակարգերի հետ կապված առկա խնդիրների լուծմանը: Խնդիրների ի հայտ գալու դեպքում մասնագետների այցելություն Երևան քաղաքում՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, << մարզերում՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:					
6	72261160/12	«SRS Femida» ձայնագրառման հատուկ համակարգի հանգույցների, տեխնիկական ու ծրագրային շահագործման, համակարգերի տեղադրման ապահովման սպասարկող կազմակերպության խնդիրներ են՝ 1.Դատական նիստերի քարտուղարներին Համակարգի աշխատանքի վերաբերյալ խորհրդատվություն՝ ըստ անհրաժեշտության, 2.Համակարգի տեղադրում և կարգաբերում՝ ըստ անհրաժեշտության, 3.Համակարգի սպասարկում՝ ըստ անհրաժեշտության, 4.Համակարգի համար նախատեսված համակարգիչներում Օպերացիոն համակարգի տեղադրում և սպասարկում՝ ըստ անհրաժեշտության, 5.Համակարգով ստեղծված, սակայն նիստերի ջնջված ձայնագրությունների վերականգնում՝ ըստ անհրաժեշտության, 6.Համակարգի համար նախատեսված համակարգիչների ու հարակից սարքավորումների կանխարգելիչ պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացում /ամսական կտրվածքով/, 7.Համակարգի դիագնոստիկա/ամսական կտրվածքով/, 8.Ձայնագրված նիստերի արխիվացում՝ ըստ անհրաժեշտության, 9.Արագ արձագանք դատական նիստերի դահլիճներում տեղադրված Համակարգերի հետ կապված առկա խնդիրների լուծմանը: Խնդիրների ի հայտ գալու դեպքում մասնագետների այցելություն Երևան քաղաքում՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, << մարզերում՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:	դրամ	***233 000***	1	Ստորև նշված ցանկի համաձայն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ:

1. Ծառայության մատուցման ենթակա առանձնացված ստորաբաժանումները

<<	Անվանումը	Ձայնագրառման հատուկ համակարգի քանակը /հատ/	Հասցեն
<< մարզային դատարաններ			

3	*Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան, այդ թվում՝*	8	
3.1	քաղաք Իջևան	4	Նալբանդյան 1/1
3.2	քաղաք Դիլիջան	2	Շահումյան 15
3.3	քաղաք Նոյեմբերյան	1	Կամոյի 3
3.4	քաղաք Բերդ	3	Այգեստան 49ա
4	*Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, այդ թվում՝*	9	
4.1	քաղաք Սևան	4	Աբովյան 6/1
4.2	քաղաք Ճամբարակ	2	Գարեգին Նժդեհի 99/1.
4.3	քաղաք Վարդենիս	2	Ազգալդյան 2
4.4	քաղաք Գավառ	1	Սայադյան 18
5	*Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, այդ թվում՝*	12	
5.1	քաղաք Վանաձոր	5	Մխիթար Գոշի 6
5.2	քաղաք Ալավերդի	1	Թումանյան 8
5.3	քաղաք Տաշիր	2	Ջահուկյան թիվ 19, թաղ. 6
5.4	քաղաք Սպիտակ	2	Ալեք Մանուկյան 2 նրբ.10.
5.5	քաղաք Ստեփանավան	2	Սուրբ Վարդանի 3
6	*Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան , այդ թվում՝*	9	
6.1	քաղաք Կապան	4	Մելիք Ստեփանյան 3/2
6.2	քաղաք Մեղրի	1	Զորավար Անդրանիկ 24/1
6.3	քաղաք Գորիս	3	Անկախության 4/1
6.4	Քաղաք Սիսիան	1	Գարեգին Նժդեհի 6.

Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Հայկ Հայրապետյան Ռազմիկի Ա/Ձ
Հասցե՝ ք. Աբովյան, Հանրապետության 12/25
ՀՎՀՀ՝ 2051132124141001
ՀՎՀՀ՝ 43083511
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ա/Ձ Հ. Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

«05» 12 2018թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/11-1» ծածկագրով պայմանագրի

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության										
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	72261160/11	Ձայնագրառման հատուկ համակարգի սպասարկման ծառայություններ	-	-	-	-	-	-	233 000	233 000
4	72261160/15	Ձայնագրառման հատուկ համակարգի սպասարկման ծառայություններ	-	-	-	-	-	-	290 000	290 000
5	72261160/13	Ձայնագրառման հատուկ համակարգի սպասարկման ծառայություններ	-	-	-	-	-	-	379 000	379 000
6	72261160/12	Ձայնագրառման հատուկ համակարգի սպասարկման ծառայություններ	-	-	-	-	-	-	233 000	233 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ ***Կ. Փոլադյան***

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Հայկ Հայրապետյան Ռազմիկի Ա/Ձ
Հասցե՝ ք. Աբովյան, Հանրապետության 12/25
ՀՎՀՀ՝ 2051132124141001
ՀՎՀՀ՝ 43083511
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ա/Ձ Հ. Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

«05» 12 Հավելված N 3
2018թ. կնքված
«ԴԴ-ԳՀՇՁԲ-18/11-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ արադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման կա գումարը զար դրամ/	Վճա ման կետը ստ ման անակ ույցի/
			ըստ պայմանագրով ստատված գնման ամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով ստատված գնման ամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«05» 12. 2018թ. Հավելված N 3.1
կնքված «ԴԴ-ԳՀՇՁԲ-18/11-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն